ԸՆԿԵՐԻՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա՜խ, նորից եկաւ լալագար գարուն,
Թաւշեայ դալարով շնչեցին արտեր,
Նորից ծաղկեցին աղբիւրաց-արուն,
Հազար բուրմունքով հազարան-վարդեր.
Աւա՜ղ, նա, որին շատ էր նմանում
Գարունը սիրուն, նա չկայ հիմա.
Նրա հետ մեռաւ սէր ու խնդութիւն,
Նրա հետ մեռաւ երգը գարունքուայ։

Եւ քար-արցունքով կուրծքս եմ ծեծում
Ու չեմ հասկանում, մի՞թէ մեռար դու,
Դո՛ւ, որ երգ էիր, աշխոյժ ու կրակ,
Ի՞նչպէս ես ննջում սառը հողերի տակ.
Ի՞նչպէս չես ելնում, արևը երգում.
Այդպէս լո՛ւռ, անշարժ. մինչև՞ երբ մնաս
Գարնան զարդերին համր, անտարբեր,
Դո՛ւ կեանք, դո՛ւ երազ, իմ անո՛ւշ ընկեր...

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ